ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 փետրվարի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

8
(3217)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com



ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վարչությունում իրականացվող բազմադրվագ քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ հանցավոր կազմակերպության մեջ ներգրավված անձինք, որպես «խաբեության թիրախ» ընտրված քաղաքացիների մոտ վճռականություն առաջացնելու եւ հավատ ներշնչելու նպատակով, հիմնականում ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց տվյալներով ու տարբեր հեռախոսահամարներով «WhatsApp»-ում ստեղծում են կեղծ օգտահաշիվներ: Այնուհետեւ հանցավոր կազմակերպության անդամները, կեղծ օգտահաշիվներով հաղորդագրություններ ուղարկելով եւ հեռախոսազանգեր կատարելով, խաբեությամբ ներկայանում են իբր ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության եւ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներ, մտացածին պատրվակներով մոլորության մեջ են գցում մարդկանց՝ պահանջելով վարկ վերցնել կամ կանխիկացնել ՀՀ տարբեր բանկերի իրենց հաշիվներում առկա գումարները եւ իբր դրանց անվտանգ պահպանությունն ապահովելու համար ուղղորդում են QR կոդի մուտքագրման եղանակով, կրիպտոդրամապանակի օգտագործմամբ կամ այլ երկրներում բացված հաշվեհամարներին կատարել ուղիղ փոխանցումներ՝ այդ կերպ խարդախությամբ տիրանալով տասնյակ քաղաքացիների խոշոր եւ առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներին:

Քննչական կոմիտեն քաղաքացիներին հորդորում է դրսեւորել զգոնություն եւ նմանատիպ հաղորդագրություններ կամ հեռախոսազանգեր ստանալու դեպքում այդ մասին հայտնել իրավապահ մարմիններին՝ զերծ մնալով «խաբեության թիրախ» դառնալուց:

Փետրվարի 7-ին Կոմիտաս Պարկ բնակելի 1-ին համալիրի առաջին շենքի տարածքում տեղի է ունենալու բողոքի ակցիա: Ակցիայի նախաձեռնողներից մեկը ArmLur.am-ի հետ զրույցում նշեց հետեւյալը. «Մենք խնդիրներ ունենք Կառուցապատողի հետ նորակառույց շենքերի համալիրի հետ: Ամենաառաջնային խնդիրը, որ արդեն երկու տարուց ավել է, այն է, որ չեն հանձնել նախատեսված ժամկետում: Երկրորդ խնդիրը պայմանավորված է գազամատակարարման հետ, որն արդեն մեկ տարի շարունակ ձգձգում են ու ամեն անգամ ասում են՝ հաջորդ ամիս կլինի, բայց առ այսօր առկա է այդ խնդիրը: Ունենք բազմաթիվ այլ խնդիրներ՝ կապված ջրամատակարարման համակարգի հետ: Ցուրտ օրերին ամբողջովին խողովակները պայթել էին, լցվել բնակիչների վերանորոգված բնակարանները, տարբեր վնասներ հասցրել: Էլեկտրամատակարարման խնդիր էլ ունենք: Մլուխները, կարծես թե, անորակ են անցկացված ու անընդհատ անջատվում են բնակարաններում ու շենքերում»:

⇨ էջ 3



Միքայել Սրբազանը փաստաբանների միջոցով գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների խախտման փաստերով: Այս մասին հայտարարություն է տարածել նրա պաշտպանական թիմը: Գանգատում նշվել են Միքայել Սրբազանի անօրինական կալանավորման (հոդված 5), արտահայտվելու ազատության խախտման (հոդված 10), ինչպես նաեւ ազատությունից զրկելու եւ քրեական հետապնդումը քաղաքական նպատակներով իրականացնելու (հոդված 18) վերաբերյալ փաստեր եւ փաստարկներ: Վերաքննիչ քրեական դատարանում (դատավորներ՝ Է.Մանասյան, Ն.Հովակիմյան եւ Վ.Մարգարյան, ք.Երեւան, Գ.Նժդեհ 23 շենք) երեկ կայացավ դատական նիստը:

⇨ էջ 3

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը: Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Սանկտ Պետերբուրգում ՀՀ նախկին գլխավոր հյուպատոս, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբիկ Կարապետի Հակոբյանից եւ վերջինիս փոխկապակցված անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝ 5 անշարժ գույք, 1 գույքի գնման իրավունք. 2 տրանսպորտային միջոց:

⇨ էջ 2

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՆԳԻՍՏ ԽՂՃՈՎ ԳՆՈՒՄ, ՀԱՆԴԻՊՈՒՄ Է»

Հայաստանի անկախության դայֆարի առաջնորդ, «Ազգային ինքնորոշում միավորում» կուսակցության հիմնադիր-առաջնորդ Պարույր Հայրիկյանի հետ զրուցել ենք Աբու Դաբիում տեղի ունեցած Փաշինյան-Ալիեւ հերթական հանդիպման եւ դրանից սպասելիքների մասին:



-Պարոն Հայրիկյան, փետրվարի 4-ին Աբու Դաբիում Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Ինչպե՞ս եք գնահատում Փաշինյան-Ալիեւ հաճախակի հանդիպումները: Արդյո՞ք դրանք միայն պայմանավորված են խաղաղության պայմանագրով, թե՞ հիմնականում ձեւական բնույթ կրող հանդիպումներ են:

-Հանդիպումները, մանավանդ հակամարտող ուժերի ղեկավարների միջեւ, շատ կարեւոր են, բայց կան մարդիկ, որ համարում են արդեն խաղաղությունը հաստատվել է՝ առանց հաշվի առնելու ռազմագերիների հանգամանքը: Առաջին, երկրորդ, երրորդ հանդիպումները ես կհասկանայի, բայց դրանից հետո, եթե Հայաստանի Հանրապետության պաշտոնապես ճանաչված պատասխանատուն շարունակում է հանդիպել այն մարդու հետ, որը բազմաթիվ միջազգային հանցագործությունների հեղինակ է եւ դրանք չի շեշտում, այդ հանդիպումներով նա պարտակում է, բռնապետին ներկայացնում է որպես բանակցությունների արժանի մարդ: Եթե դու ժողովրդավար ես, ասում եմ քեզ, փալա՛ս, ողորմելի՛ փալաս, դու ժողովրդավարության «ժ» տառն ասելու իրավունք չունես, որովհետեւ հանգիստ խղճով գնում, հանդիպում ես սեփական երկրում բռնապետություն հաստատած անձի հետ: Մեկ անգամ, երկու անգամ՝ պետական շահերից ելնելով՝ հասկանալի է, բայց առաջ գնալ է պետք: Ալիեւը, չնայած ՄԱԿ-ի կանոնադրության պահանջին, չնայած Մինսկի խմբի պարտադրած Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում պատերազմը բացառող պայմանավորվածությանը, հարձակվեց Հայաստանի վրա: Հարձակվեց, այո՛, Հայաստանի վրա, որովհետեւ ինքնորոշված Արցախն էլ է Հայաստան: Դա աշխարհին էլ գիտի, ինքն էլ գիտի, դրա համար է այդքան ճղճղում՝ Արեւմտյան Ադրբեջանի եւ այլնի մասին: Հանցագործություններից մեկը ուժի միջոցով հարցերը լուծելն էր, եւ ինքը գնաց այդ ճանապարհով, ինքնորոշումը խախտելու ճանապարհով:

Այս ամենն իմացող մարդը ոչ թե գնում է առաջին, երկրորդ, երրորդ բանակցությունների, այլ գնում է 10-րդ եւ կողմնակի հարցերով բանակցության: Այս դեպքում նրա ճակատին պետք է գրել սրբապիղծ արարած:

-Այս փուլում հնարավո՞ր է Հայաստանը նորից զիջումների գնա կամ սահմանազատման ակտիվ գործողություններ սկսվեն:

-Ոչ միայն մտահոգություններ ունեմ, այլ փաստ է: Դա իրողություն է, երբ Ալիեւը խոսեց, օրինակ՝ Հայաստանի միջոցով անխոչընդոտ անցնել-գնալու մասին, եւ ինքն էլ դա ներկայացրեց որպես ոչ անխոչընդոտ: Ալիեւն այսօր էլ շարունակում է նույն բաներն ասել եւ նույնիսկ դրանով հպարտանալ: Գորիս, Կապան ճանապարհը դեռ սահմանազատված չէ:

Նկատենք, որ ամբողջ մեր պատմության ընթացքում դա համարվել է Հայաստանի տարածք: ՀՀ-ն հատկացումներ է արել, այդ ճանապարհները կառուցվել են հայկական վարչական միավորների կողմից: Ինքը չի անում որեւէ բան, որ փոխադարձության սկզբունքով լինի: Հետեւաբար, եթե հարաբերություններում փոխադարձության սկզբունքը կամ ելակետային դրույթը բացակայում է, ապա դա նշանակում է, որ միայն վատին պետք է սպասել:

-Այս ողջ գործընթացում Հայաստանի համար պատմական շրջադարձը ո՞րն է լինելու:

-Գիտեք, Հայաստանի համար պատմական շրջադարձը եղավ, երբ ժամանակին հինգ հոգի որոշեցին բարդ ժամանակներում խոսել սովետի դեմ եւ հրատարակել «Անկախություն» թերթը, որովհետեւ խոսելն այլ բան է, գործելն՝ այլ: «Անկախություն» թերթի արձագանքները հասան սովետական բոլոր ազգերին: Հետո Հայաստանում տեղի ունեցավ հավաք: Անկախության պայքարը շատ ավելի լուրջ պայքար էր, եւ դա մենք սկսեցինք հինգ հոգով: Փետրվարի 18-ին ես նախատեսել եմ հանրահավաք, թող ամեն մեկը իր խնդիրը վերցնի ու գա: Փետրվարի 18-ին էլ կարող է այդ պատմական շրջադարձը լինել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՈՐԵՎԷ ԱՊՐԱՆՔ ՉԻ ԱՐՏԱՀԱՆՎԵԼ ԱԴՐԲԵՋԱՆ

«Ադրբեջանական ծագման երկու արտադրանք կա, ըստ էության, որ եկել է Հայաստան՝ բենզինը եւ դիզելային վառելիքը, հայկական ծագման արտադրանք չկա, որն արտահանվել է Ադրբեջան, բայց կողմերը փոխանակվել են ցանկերով, այդ թվում նաեւ իրենք են մեզ երկար ցանկ տվել եւ մենք իրենց, եւ գործարար միջավայրը կարծում ենք, որ ժամանակի ընթացքում կարձագանքի»,- փետրվարի 6-ին մամուլի ասուլիսում հայտարարեց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը՝ անդրադառնալով հարցին, թե այս պահի դրությամբ կա՞ որեւէ հայկական ապրանք, որ արտահանվել է Ադրբեջան:

«Պատճառները տարբեր են, սկսած նրանից, որ շուկաները դեռեւս միմյանց բավականին անծանոթ են, ինչպես մեր շուկան իրենց համար, այնպես էլ իրենց շուկան մեր համար: Սրա համար, իմ կարծիքով, պետք է ժամանակ, եւ դա այնպիսի գործընթաց է, որը ավելի շատ մասնավոր հատվածի դաշտում է: Պետությունը ստեղծում է պայման՝ քաղաքական պայմանավորվածություններով, ճանապարհի բացվելով, երկաթուղու գործելով եւ այլն: Հիմա մենք այդ պայմանների մի զգալի մասը ստեղծել ենք, բայց դեռ ամբողջությամբ ստեղծված չէ: Օրինակ, ուղիղ երկաթուղային հաղորդակցություն դեռեւս չկա, բայց դուք շատ լավ գիտեք, որ այդ ուղղությամբ աշխատանքը կա ու կլինի դա մի քանի տարի անց: Ես նկատի ունեմ Թրիփի գործարքումը, մինչեւ այդ իհարկե կարող է նաեւ այլ գործիքակազմ էլ աշխատի:

Կան ուղիղ հաղորդակցություն ճանապարհներ, չնայած մենք բացել ենք, բայց դեռեւս իրենք չեն օգտվում մեր ճանապարհներիից, որպեսզի ապրանքը Հայաստանի միջոցով, ենթադրենք, տանեն Թուրքիա կամ հակառակը:

Սա մի գործընթաց է, որը ժամանակատար է, բարդ է: Երկու տարի առաջ, երբ բոլորը խոսում էին նրա մասին, որ կարող է ամեն պահի լինի պատերազմ, հիմա բոլորը խոսում են նրա մասին, թե ինչու, օրինակ, այս կամ այն ապրանքը չի վաճառվում կամ դեռ չի վաճառվել: Սա արդեն շատ լավ է:

Ես կարծում եմ՝ պատերազմից խաղաղության խոսակցությունը արդեն իսկ ֆանտաստիկ է, խաղաղության օգուտների մասին խոսակցությունը շատ լավ խոսակցություն է, որը պետք է ավելացնենք, որպեսզի մաքսիմալ շատ օգուտներ ունենանք»,-ասաց Պապոյանը:

Նա նկատեց, որ ամենամեծ արդյունքը այն է, որ այսօր պատերազմի հավանականությունը մոտեցված է զրոյի, այնինչ երկու տարի առաջ դա շատ բարձր էր. «Այսօր մենք խոսում ենք արդեն խաղաղության մասին, դրա արդյունքը դուք տեսել եք մեր տարբեր որոշումներում, այդ թվում նաեւ օրենսդրական: Մեկ տարի առաջ ոչ մեկը չէր պատկերացնում, որ Հայաստանը ու Ադրբեջանը առեւտուր կանեն: Այդ ամեն ինչի համար պետք է ժամանակ, որովհետեւ դրանք երկարատեւ բարդ գործընթացներ են, հեշտ չեն»,-ասաց նա:

ԻՆՖԱՐԿՏԻ ԱՌԱՔԱՑՄԱՆ ՌԻՍԿ

Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի գործով դատական նիստի ժամանակ նրա պաշտպան Զարուհի Փոստանջյանը միջնորդեց ամբողջական եւ անկախ բժշկական փորձաքննություն նշանակել իր պաշտպանյալի առողջական վիճակը գնահատելու համար, նաեւ գնահատել առողջական վիճակի փոփոխությունները կալանքի ընթացքում, «Երեւան կենտրոն» ՔԿՀ-ում ցուցաբերվող բժշկական օգնության որակը, ինչպես նաեւ Վարդան Ղուկասյանի առողջական վիճակի համատեղելիությունը կալանքի հետ՝ հաշվի առնելով նրա կյանքին սպառնացող ռիսկերը:

Նա երկար թվարկեց բոլոր հիվանդությունները, որոնք առկա են Վարդան Ղուկասյանի մոտ՝ հավելելով, որ 2026-ի հունվարին արձանագրվել է, որ իր պաշտպանյալի մոտ կա սուր սրտամկանի ինֆարկտի առաջացման բարձր ռիսկ՝ ծանր բարդություններով եւ մահվան հավանականությամբ: «Ակնհայտ է, որ Վարդան Ղուկասյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանքի պայմաններում չի ապահովվել իր կյանքի ու առողջության համար նվազագույն անհրաժեշտ բժշկական խնամք:

Արդեն 3,5 ամիս է՝ Վարդան Ղուկասյանը բնակվում է ընդամենը 15 քմ տարածքում, փակ խցում, որն ունի երկու փոքր պատուհան, չի օդափոխվում, սանհանգույցը բաժանվում է միայն վարագույրով:

Սույն միջնորդությամբ պահանջում եմ նշանակել կրկնակի հանձնաժողովային փորձաքննություն, որ այդ հանձնաժողովը ստեղծվի հավասարության սկզբունքով՝ ներգրավելով Վարդան Ղուկասյանի առաջադրած բժիշկ մասնագետներին»:

Հիշեցնենք, որ Քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ Վարդան Ղուկասյանը ու եւս 7 հոգի, այդ թվում՝ Գյումրիի գլխավոր ճարտարապետ Հենրիկ Գասպարյանը, ձերբակալվել են 4 մլն դրամ կաշառք ստանալու համար:

Հակակոռուպցիոն դատարանում քննվող գործով Վարդան Ղուկասյանը մեղադրվում է 1999-ից 2012 թվականներին Գյումրիի քաղաքապետ եղած ժամանակ հողամասեր ապօրինի օտարելու համար:

Գյումրիի քաղաքապետը մեղադրանքը չի ընդունում:

ՊԱՀԱՆՋՈՒՄ Է

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Սանկտ Պետերբուրգում ՀՀ նախկին գլխավոր հյուպատոս, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ռուբիկ Կարապետի Հակոբյանից եւ վերջինիս փոխկապակցված անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 5 անշարժ գույք, 1 գույքի գնման իրավունք.
- 2 տրանսպորտային միջոց:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՔԱՅԵԼ ՍՐԲԱԶԱՆԸ ԴԻՄԵԼ Է ՄԻԵԴ

Միքայել Սրբազանը փաստաբաններ-ի միջոցով գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանին՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների խախտման փաստերով: Այս մասին հայտարարություն է տարածել նրա պաշտպանական թիմը:

Գանգատում նշվել են Միքայել Սրբազանի անօրինական կալանավորման (հոդված 5), արտահայտվելու ազատության խախտման (հոդված 10), ինչպես նաեւ ազատությունից զրկելու եւ քրեական հետապնդումը քաղաքական նպատակներով իրականացնելու (հոդված 18) վերաբերյալ փաստեր եւ փաստարկներ:

Վերաքննիչ քրեական դատարանում (դատավորներ՝ Է.Մանասյան, Ն.Հովակիմյան եւ Վ.Մարգարյան, ք.Երեւան, Գ.Նժդեհ 23 շենք) երեկ կայացավ դատական նիստը: Վերաքննիչ դատարանը որոշեց բավարարել միջնորդությունը եւ Միքայել Սրբազանի խափանման միջոցը փոխել: Սրբազանը կգտնվի տնային կալանքի տակ:

ԱԴՐԲԵՋԱՆ–ԻՐԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության պաշտպանության եւ զինված ուժերի աջակցության նախարար Ազիզ Նասիրզադեի գլխավորած պատվիրակությանը:

Այս մասին հայտնում է ադրբեջանական APA լրատվական գործակալությունը:

Հիշելով Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի հետ մի քանի օր առաջ ունեցած հեռախոսազրույցը՝ Ալիեւն ասել է, որ բարձր մակարդակի տարբեր շփումները լավ հնարավորություն են ստեղծում երկկողմ օրակարգին վերաբերող հարցեր քննարկելու համար:

Ընդգծելով, որ Մասուդ Փեզեշքիանի՝ անցյալ տարի Ադրբեջան կատարած պաշտոնական այցը հաջող էր, եւ լավ արդյունքներ են ձեռք բերվել՝ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ այդ այցից հետո երկու երկրների միջեւ հարաբերությունները զարգացել են:

Ընդգծելով, որ աշխարհի շատ մասերում ներկայում շարունակվում են պատերազմներ եւ հակամարտություններ՝ Ալիեւը նշել է, որ Հարավային Կովկասում արդեն իսկ խաղաղություն է հաստատվել: Նա վստահություն է հայտնել, որ սա մեծ նշանակություն ունի նաեւ Իրանի համար:

«Մենք խաղաղություն ենք ուզում ամբողջ աշխարհում, որպեսզի արյունահեղություն չլինի, պատերազմներ չլինեն», - ասել է Ադրբեջանի նախագահը:

Ալիեւը հայտարարել է՝ Ադրբեջանը մտահոգված է տարածաշրջանում ստեղծված իրավիճակով եւ պատրաստ է աջակցություն ցուցաբերել այդ լարվածության կարգավորման գործում:

Ազիզ Նասիրզադեն Ալիեւին փոխանցել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի ողջույնները եւ հայտարարել, որ Ադրբեջան է ժամանել Իրանի ղեկավարի հանձնարարությամբ:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ԴԻՄԵԼՈՒ ԵՆՔ ԾԱՅՐԱՀԵՂ ՄԻՔՈՑՆԵՐԻ

Փետրվարի 7-ին Կոմիտաս Պարկ բնակելի 1-ին համալիրի առաջին շենքի տարածքում տեղի է ունենալու բողոքի ակցիա:

Ակցիայի նախաձեռնողներից մեկը ArmLur.am-ի հետ զրույցում նշեց հետեւյալը. «Մենք խնդիրներ ունենք Կառուցապատողի հետ նորակառույց շենքերի համալիրի հետ: Ամենաառաջնային խնդիրը, որ արդեն երկու տարուց ավել է, այն է, որ չեն հանձնել նախատեսված ժամկետում: Երկրորդ խնդիրը պայմանավորված է գազամատակարարման հետ, որն արդեն մեկ տարի շարունակ ձգձգում են ու ամեն անգամ ասում են՝ հաջորդ ամիս կլինի, բայց առ այսօր առկա է այդ խնդիրը: Ունենք բազմաթիվ այլ խնդիրներ՝ կապված ջրամատակարարման համակարգի հետ: Ցուրտ օրերին ամբողջովին խողովակները պայթել էին, լցվել բնակիչների վերանորոգված բնակարանները, տարբեր վնասներ հասցրել: Էլեկտրամատակարարման խնդիր էլ ունենք: Մլուխները, կարծես թե, անորակ են անցկացված ու անընդհատ անջատվում են բնակարաններում ու շենքերում»:

Քաղաքացին ArmLur.am-ին նաեւ հայտնեց, որ խնդրով պայմանավորված՝ դիմել են «Գազպրոմ» ընկերությանը, Քաղաքաշինության նախարարությանը, Կառուցապատողին, Կառավարությանը, վարչապետի աշխատակազմին, բայց խնդրին լուծում չի տրվել:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԹՍ–ՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ ԵՆ ԹՌԻՉՔՆԵՐԸ

Իրանական հեռահար հետախուզական անօդաչու թռչող սարքերը դադարեցրել են Արաբական ծովի երկնքում թռիչքներն ամերիկյան «Աբրահամ Լինքոլն» ավիակիրի հետ կապված միջադեպից հետո: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այդ մասին վկայում են Flightradar24 ավիացիոն ռեսուրսի տվյալները:

Վերջին երկու օրվա ընթացքում իրանական հետախուզական անօդաչու թռչող սարքի ոչ մի թռիչք չի գրանցվել ավիակրի գտնվելու շրջանում: «Աբրահամ Լինքոլն» ավիակիրն, ըստ Մերձավոր Արեւելքում ԱՄՆ զինված ուժերի կենտրոնական հրամանատարության (CENTCOM) հաղորդագրության, ներկայում նավարկում է Իսլամական Հանրապետության ափերից 500 մղոն (800 կմ) հեռավորության վրա:

Ավելի վաղ ԱՄՆ զինված ուժերը հայտնել էին, որ փետրվարի 3-ին F-35C Lightning II տախտակամածային կործանիչը խոցել է իրանական անօդաչու թռչող սարք, որն Արաբական ծովում մոտեցել էր ամերիկյան «Աբրահամ Լինքոլն» ավիակրին:

CENTCOM-ի հրամանատարությունը նախազգուշացրել է իրանական ուժերին, որ չի հանդուրժի վտանգավոր մանեւրներ, այդ թվում՝ թռիչքներ ամերիկյան ռազմանավերի վերեւում կամ դրանց մոտեցում արագընթաց կատերներին:

Միեւնույն ժամանակ, ԱՄՆ ռազմածովային ուժերի P-8A Poseidon հակասուզանավային պարեկային ինքնաթիռը եւ MQ-4C Triton ռադիոէլեկտրոնային հետախուզական հեռահար անօդաչու սարքը փետրվարի 5-ին մի քանի ժամ շարունակ թռիչքներ են իրականացրել Իրանից դեպի հարավ-արեւելք ընկած շրջանում:

Հունգարիան հավանություն չի տա ՆԱՏՕ-ի գծով դաշնակիցների գործողություններին, եթե նրանք որոշում ընդունեն զորքեր ուղարկել Ուկրաինա, որովհետեւ դա կնշանակի պատերազմ Ռուսաստանի դեմ: Ինչպես տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից, այդ մասին հայտարարել է Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանը՝ Kossuth ռադիոկայանի առավոտյան ծրագրում մեկնաբանելով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեի վերջերս արած հայտարարությունը:

Փետրվարի 3-ին Կիեւ կատարած այցի ժամանակ ելույթ ունենալով Ուկրաինայի Գերագույն ռադայում՝ Ռյուտեն նշել էր, որ «կամեցողների կոալիցիայի» զինված ուժերը կհայտնվեն Ուկրաինայի տարածքում Ռուսաստանի հետ խաղաղության համաձայնագրի կնքումից անմիջապես հետո: Նրա խոսքով՝ դրանք կգտնվեն ցամաքում, ծովում եւ օդում:

«Խոսքը ոչ միայն ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի արտահայտության մասին է, այլեւ Ուկրաինա զորքեր ուղարկելու վերաբերյալ Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ գրավոր համաձայնության մասին», - ասել է Օրբանը:

Նա նշել է, որ այդ կերպ Արեւմուտքը հույս ունի անվտանգության երաշխիքներ տրամադրել Կիեւին, թեեւ դա, ընդհակառակը, ստեղծում է Ռուսաստանի հետ հակամարտության սպառնալիք:

«Ռուսներն ամեն օր ասում են. մի արեք դա, որովհետեւ արեւմտյան երկրների զինվորները ռազմական թիրախ կդառնան, եթե մտնեն Ուկրաինայի տարածք», - հիշեցրել է վարչապետը:

Նրա կարծիքով՝ «դա նշանակում է, որ եվրոպական բանակը, եվրոպացի զինվորները կկռվեն ռուսների դեմ Ուկրաինայի տարածքում»:

«Ուստի մենք պետք է հստակ հայտարարենք, որ ոչ մի դեպքում չենք ներքաշվի Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ՝ ո՛չ Ռուսաստանի, ո՛չ էլ Ուկրաինայի տարածքում», - ընդգծել է Օրբանը:

Նրա խոսքով՝ Հունգարիան պատրաստ չէ ամեն բանով աջակցել ՆԱՏՕ-ի գծով իր դաշնակիցներին, այլ «միայն մասամբ»:

ԳՆԱՑԵԼ Է ԱՇԽԱՏԱՎԱՅՐ

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻ ԶՈՔԱՆՉԻՆ ԱԶԱՏ ԵՆ ԱՐՁԱԿԵԼ

ՔՊ պատգամավոր Կարեն Սարուխանյանի զոքանչին տնային կալանքից ազատ են արձակել:

Երեկ ՔՊ-ական պատգամավորի զոքանչը անգամ գնացել է Գյումրու քաղաքապետարան՝ իր աշխատանքի վայր: Քննչական կոմիտեն հայտնել էր, որ Շիրակի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ էին ձեռք բերվել այն մասին, որ Գյումրու համայնքապետարանի պաշտոնատար անձինք մի շարք աշխատակիցների՝ աշխատանքից ազատելու սպառնալիքով, ցուցում են տվել, որպեսզի վերջիններս հրահանգավորեն իրենց ենթակայության ներքո գտնվող մանկապարտեզների տնօրեններին՝ սաներին տուն ուղարկել եւ իրենց անձնակազմի հետ անմիջապես մեկնել համայնքապետարան՝ թույլ չտալու ձերբակալել համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանին:

Արդյունքում, նման ցուցումից հետո բազմաթիվ մանկապարտեզների տնօրեններ, դադարեցնելով աշխատանքը, անձնակազմի հետ միասին ժամանել են համայնքապետարանի հարակից տարածք եւ միացել հավաքի մասնակիցներին:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում չորս անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի 2-րդ մասով (հավաք անցկացնելուն կամ դրան մասնակցելուն խոչընդոտելը կամ հարկադրելը, ինչպես նաեւ հավաքին մասնակցելու կամ հավաքին մասնակցելուց հրաժարվելու նպատակով նյութապես շահագրգռելը) եւ 46-486-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելուն դրդելը):

Համայնքապետարանի երեք աշխատակից ձերբակալվել էին, որոնցից մեկը ՔՊական Կարեն Սարուխանյանի զոքանչն էր, որը Գյումրու քաղաքապետարանի կրթության բաժնում է աշխատում:

Արդյունքում դատարանը որոշել էր ՔՊ-ականի զոքանչի նկատմամբ խափանման միջոց ընտրել տնային կալանքը, բայց օրերս նույն Հակակոռուպցիոն դատարանի որոշմամբ Սարուխանյանի զոքանչը ազատ է արձակվել եւ նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրված վարչական վերահսկողությունը եւ պաշտոնավարման կասեցումը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փետրվարի 5-ին ձերբակալվել եւ բաժին է տարվել օտարերկրյա քաղաքացի 37-ամյա մի տղամարդ, որը 2025 թ. նոյեմբերի 6-ից Իրանի Իսլամական Հանրապետության Ինտերպոլի կողմից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Հայտնաբերման մասին հայտնվել է ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ եւ դատախազությանը:

15–ԱՄՅԱ ՏՂԱՅԻ ԴԻ

Փետրվարի 5-ին օպերատիվ տեղեկություններն են ստացվել, որ տներից մեկի բակում երեխայի դի կա:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ոստիկաններն ու քննիչները նշված տան բակում՝ զրուցարանի մոտ՝ ճոճաթոռի վրա, հայտնաբերել են նույն տան բնակիչ 15-ամյա տղայի դի՝ աջ քունքային հատվածում կրակոցի հետքով:

Դեպքի փաստով Շենգավիթի քննչական բաժնում «ինքնասպանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ ոստիկաններն ու քննիչները մահացածի մարմնի մոտ հայտնաբերել են օդաճնշիչ հրացան, որով, ըստ նախնական տեղեկությունների, տղան ինքնասպան է եղել:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածը սովորում էր Հայաստանում հայտնի համալսարաններից մեկի 1-ին կուրսում:

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՈՒՄ

Քրեական ոստիկանության Լոռու մարզային վարչության ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Վանաձոր քաղաքի 43-ամյա բնակիչը մեթադոն տեսակի թմրամիջոց է իրացնում, նաեւ պահում է մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 43-ամյա տղամարդը եւ երկու համաքաղաքացիները հայտնաբերվել, ձերբակալվել եւ «Օպել» մակնիշի մեքենայով հանդերձ՝ տեղափոխվել են մարզային վարչություն: Ձերբակալման ժամանակ ուղեւորներից 42-ամյա տղամարդը մեքենայի մեջ մեթադոնային լուծույթով նեռարկիչ է գցել:

Բացատրական աշխատանքի արդյունքում 43-ամյա տղամարդը հայտնել է, որ «Օպել» մակնիշի մեքենայում մարիխուանա եւ մեթադոն տեսակի թմրամիջոցներ կան:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ մեքենայում հայտնաբերվել են մարիխուանա թմրամիջոցի նմանվող զանգված, մեթադոն թմրամիջոցի նմանվող հեղուկով տարաներ եւ նույն հեղուկով ներարկիչ, գաղտնի փականով երկու դանակ եւ այլ առարկաներ:

Լոռու մարզի քրեական ոստիկանները թմրամիջոց իրացնելու դեպք են բացահայտել նաեւ հունվարի 26-ին: Իրացնելով օպերատիվ տեղեկությունները՝ նրանք Վանաձորի Հալաբյան փողոցում հայտնաբերել, ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել 33-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են մեթադոնի լուծույթով ներարկիչ եւ հոգեմետ դեղերի գրառումներով սրվակներ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ մեթադոնը նրան իրացրել էր 48-ամյա համաքաղաքացին, որը նույնպես հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է մարզային վարչություն եւ հայտնել, որ 33-ամյա երիտասարդին ինքն է թմրամիջոց իրացրել:

Նախաձեռնվել են քրեական վարույթներ: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԹՄՐԱՄԻՋՈՑ

Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնում փետրվարի 4-ին օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ Մասիս քաղաքի 43-ամյա բնակիչը թմրամիջոց է պահում: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում 43-ամյա տղամարդը Մասիս-Նորամարգ ճանապարհին հայտնաբերվել, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող մոտ 138 գրամ զանգված:

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքը: Օրենքի համաձայն՝ օտարերկրացիների կողմից ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցներով կատարված եւ տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթեւեկության կանոնների խախտումներով կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներով վերջիններս ծանուցվելու են ՀՀ սահմանային անցակետերում՝ ՀՀ մուտքի կամ ելքի ժամանակ: Տեղեկացնում ենք նաեւ, որ օտարերկրացու տվյալները ներբեռնվելու են սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից՝ անձնագրային տվյալներով հարցում կատարելու միջոցով, ուստի տրանսպորտային միջոցներն օտարերկրացիներին հանձնող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հորդորում ենք խախտումները նրանց կողմից կատարված լինելու վերաբերյալ վարչական մարմին ներկայացվող նյութերին կցել նաեւ այն փաստաթղթի պատճենը, որով իրականացվել է սահմանահատումը: Հակառակ պարագայում՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ կատարված հարցմանը պատասխան չստանալու դեպքում խախտումն օտարերկրացու կողմից կատարված լինելու փաստն ապացուցված չի համարվի, եւ պատասխանատվությունը կկրի տրանսպորտային միջոցի սեփականատերը (իրավաբանական անձի ղեկավարը):

ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Կումայրիի բաժնի ծառայողներն ապօրինի ձեռնարկատիրության վերաբերյալ հերթական տեղեկությունը ստացան փետրվարի 3-ին՝ Գյումրիի Մազմանյան փողոցի բնակիչ 47-ամյա մի տղամարդ բնակության վայրում վաճառում է առանց ակցիզային դրոշմանիշների օղի եւ ծխախոտ: Նույն օրը բաժին հրավիրված տղամարդն ընդունեց, որ տանն ունի եւ պատրաստ է ներկայացնել առանց դրոշմային ակցիզավորման տարբեր տեսակի 31 շիշ օղի, 460 տուփ ծխախոտ, 38 հատ էլեկտրոնային ծխախոտ եւ դրա համար նախատեսված հեղուկներ, որոնք վաճառելու նպատակով ձեռք է բերել «Բավրայի» անցակետում գործող առեւտրի կետից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 5-ից 6-ը բացահայտվել է 194 հանցագործություն, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՂԲԱՎԱՅՐԵՐԸ՝ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ

Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ Տավուշի մարզի համայնքներում ներկայումս գործում է 25 աղբավայր: Որոշ աղբավայրեր վատթար վիճակում են: Իջեւան համայնքի աղբավարը գտնվում է Լուսաձոր գյուղի տարածքում, Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրին: Դիլիջան համայնքի աղբավայրը 3 հեկտար տարածք է զբաղեցնում, այն ցանկապատված չէ, այնտեղ հաճախ հրդեհներ են լինում, աղբավայրը պատվում է ծխով: Այդ աղբավայրում թափառում են անտեր շները, Դիլիջանի անասնատերերի կովերն անարգել արածում են՝ սնվելով նաեւ թունավոր նյութերով:

Շրջակա միջավայրի նախարարությանը հարցում եմ արել, թե Հայաստանում քանի աղբավայր կա, քանիսը՝ որ մարզում, դրանցից քանիսն են համապատասխանում բնապահպանության օրենսդրության պահանջներին: Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Սերգո Աթանեսյանի ստորագրությամբ պատասխան եմ ստացել, ուր նշված է. «Համաձայն Կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 992-Ա որոշման՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության կազմակերպման եւ սանիտարական մաքրման ոլորտում լիազոր մարմինը տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն է: Շրջակա միջավայրի նախարարությունը կոշտ կենցաղային թափոնների տեղադրման կամ թաղման գործունեություն իրականացնելու լիցենզիա եւ լիցենզիայի ներդիր տրամադրել է 4 կազմակերպության՝ Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի եւ Արագածոտնի մարզերում գործունեություն իրականացնելու համար»:

Փաստորեն Հայաստանի մյուս մարզերում, Երեւանում կոշտ կենցաղային թափոնների տեղադրումը, թաղումը, աղբավայրերի կառավարումը կատարվում է ոչ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ, Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա ամուսնության քավոր Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «2026 թվականին Հայաստանում փակվելիք 230 հանրակրթական դպրոցներից քանի՞սն է Տավուշի մարզում, ո՞ր դպրոցներն են դրանք, ինչպե՞ս է լուծվելու այդ դպրոցների աշակերտների՝ այլ բնակավայրերի դպրոցներ ամենօրյա տեղափոխության հարցը»: Մարզպետարանի աշխատակազմից պատասխանել են. «Դպրոցների փակվելու վերաբերյալ որոշում առկա չէ»: Իհարկե, ուսումնական տարվա կեսին ինչո՞ւ պետք է դպրոցների փակման որոշում ընդունվեր: Սակայն Տավուշի մարզպետը չի հերքել, որ դպրոցներ են փակվելու:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՍՈՂ ՓԱՍՏԵՐ

Ո՞ՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՆ ԵՆ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ

Վարորդները տեւական ժամանակ է՝ ահազանգում են, որ այն, ինչ կատարվում է Երեւանի ճանապարհներին առաջացած փոսերի հետեւանքով, սարսափ ֆիլմից է:

Ավելին, շատ վարորդներ Armlur.am-ի նկարահանման ժամանակ ասում էին, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի մոտ գլուխ գովալու փոխարեն քաղաքական իշխանությունները թող գործի անցնեն ու ճանապարհներին առաջացած փոսերի խնդիրը լուծեն: Ի՞նչ իրավիճակ է մայրաքաղաքում արձանագրել է Armlur.am-ը:

Հիշեցնենք, որ 2025 թ. օգոստոսի 13-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն անդրադարձել էր Սպիտակ տանը Նիկոլ Փաշինյանի հետ ունեցած զրույցի մի դրվագի: Վերոնշյալ օրը Դոնալդ Թրամփն այցելել էր Քենեդիի կենտրոն, որտեղ անդրադարձել էր ԱՄՆ-ում ենթակառուցվածքային որոշ խնդիրների:

Նա մասնավորապես ասել էր. «Շատ ղեկավարներ են գալիս: Վերջերս Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարներն էին եկել: Ես հարցրի՝ ի՞նչ ես կարծում, նա ասաց. «Դե, ճանապարհներն ավելի լավն են Հայաստանում, քան Վաշինգտոնում»: Դա ամոթալի է»:

Ու մինչ քաղաքական իշխանությունը միջազգային ասպարեզում գլուխ է գովում, Հայաստանում այլ իրականություն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՆ–Ի ԿՈՉԸ ԻՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

ԱՄՆ-ն խորհուրդ է տվել իր քաղաքացիներին անհապաղ լքել Իրանը ցամաքային ճանապարհով՝ Հայաստանի կամ Թուրքիայի տարածքով՝ դա պատճառաբանելով երկրում անվտանգության խստացված միջոցառումներով, հասարակական տրանսպորտի աշխատանքի խափանումներով, ճանապարհների փակմամբ, ինտերնետի արգելափակումներով եւ դեպի Իրան եւ այնտեղից թռիչքների սահմանափակումներով: Այս մասին հաղորդագրություն է տարածել Իրանում ԱՄՆ վիրտուալ դեսպանատունը:

«ԱՄՆ քաղաքացիները պետք է ակնկալեն ինտերնետի շարունակական խափանումներ, նախատեսեն կապի այլընտրանքային միջոցներ եւ, եթե դա անվտանգ է, դիտարկեն Իրանից ցամաքային ճանապարհով Հայաստանով կամ Թուրքիայով հեռանալու հնարավորությունը», - նշված է ծանուցման մեջ:

Նշվում է, որ բաց է Հայաստանի ցամաքային սահմանն Ագարակ-Նորդուզ հատվածում: Ըստ հաղորդագրության՝ Ադրբեջանի ցամաքային սահմանները փակ են սովորական երթեւեկության համար, հետեւաբար, Իրանից շտապ հեռանալու կարիք ունեցողները պետք է այլ տարբերակներ դիտարկեն:

Բացի այդ, Իրանում գտնվող ԱՄՆ քաղաքացիներին խորհուրդ է տրվում խուսափել ցույցերից, ապահով վայր գտնել իրենց բնակության վայրում, ունենալ սննդի, ջրի եւ անհրաժեշտ պարագաների պաշարներ, լիցքավորված պահել հեռախոսը եւ հետեւել նորություններին:

Նախատեսվում է, որ ԱՄՆ-ն եւ Իրանը փետրվարի 6-ին Օմանում բանակցություններ կանցկացնեն Թեհրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Իրանի պատվիրակությունը կգլխավորի արտգործնախարար Աբբաս Արաղչին, իսկ ԱՄՆ պատվիրակությունը՝ ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվեն Ուիթքոֆը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Աբու Դաբիում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումն Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահ Շեյխ Մուհամմադ բին Զայեդ Ալ Նահյանի հետ: Վերջինս եւս մեկ անգամ շնորհավորել է վարչապետին Ադրբեջանի հետ խաղաղության հաստատման առիթով եւ համոզմունք հայտնել, որ դրա արդյունքում ստեղծվող նոր հնարավորությունները թույլ կտան տարածաշրջանում ձեւավորել համագործակցության նոր մակարդակ: ԱՄԷ նախագահն ընդգծել է, որ իր երկիրը պատրաստ է խորացնել եւ ընդլայնել Հայաստանի հետ տարբեր ոլորտներում կապերը: Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության համար՝ հավելելով, որ ՀՀ Կառավարությունը կարեւորում է ԱՄԷ-ի հետ առեւտրատնտեսական հարաբերությունների շարունակական զարգացումը: Միաժամանակ, վարչապետն ընդգծել է, որ դրա համար առկա է մեծ ներուժ եւ այն իրացնելու անհրաժեշտ կամք:

Զրուցակիցները քննարկել են տնտեսության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր, մտքեր փոխանակել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաների շուրջ: Կողմերը կարեւորել են բարձր մակարդակի փոխադարձ այցելությունների կազմակերպումը: ՀՀ վարչապետի եւ ԱՄԷ նախագահի ներկայությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը եւ ԱՄԷ արտաքին առեւտրի նախարար Թանի բին Ահմեդ Ալ Զեյուդին ստորագրել են «Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների Կառավարության միջեւ ծառայությունների առեւտրի եւ ներդրումների մասին» համաձայնագիր: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը ԱՄԷ ավարտվել է: Վարչապետին եւ տիկին Աննա Հակոբյանին Աբու Դաբիի օդանավակայանից ճանապարհել է ԱՄԷ արտաքին առեւտրի նախարարը:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ անցած 1 օրում գրանցվել է 8 ավտովթար, 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԲՈՐԴ ՓՈՒԼ

Օմանի մայրաքաղաք Մասկատում ավարտվել է Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի եւ Օմանի արտաքին գործերի նախարար Բադր բին Համադ ալ-Բուսայիդիի միջեւ բանակցությունների երկրորդ փուլը: Այս մասին հայտնում է Mehr գործակալությունը: Տեղեկություններ են հաղորդվում, որ ԱՄՆ հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆն այժմ խորհրդակցություններ է անցկացնում Օմանի արտաքին գործերի նախարարի հետ:

Ավելի վաղ Օմանի Սուլթանության ԱԳ նախարարությունը հայտարարություն էր տարածել Մասկատում Թեհրանի եւ Վաշինգտոնի միջեւ միջուկային թեմայի շուրջ անուղղակի բանակցությունների առաջին փուլից հետո: Հաղորդագրության համաձայն՝ Օմանի արտաքին գործերի նախարար Բադր բին Համադ ալ-Բուսայիդին առանձին հանդիպումներ է ունեցել Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչիի գլխավորած իրանական պատվիրակության եւ ԱՄՆ նախագահի հատուկ բանագնաց Սթիվ Ուիթքոֆի եւ նախագահի խորհրդական ու փեսա Ջարեդ Քուշների հետ:

Հանդիպման ընթացքում Իրանի եւ Օմանի ԱԳ նախարարները քննարկել են երկկողմ եւ տարածաշրջանային հարցեր, այդ թվում՝ Իրան-ԱՄՆ միջուկային բանակցությունները: Ալ-Բուսայիդին վերահաստատել է Օմանի հանձնառությունը՝ շարունակելու աջակցել երկխոսությանը: Նա նաեւ հաստատել է Սուլթանության պատրաստակամությունը՝ համագործակցելու տարբեր գործընկերների հետ՝ փոխադարձ համաձայնեցված քաղաքական լուծումների հասնելու համար:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ փետրվարի 6-ին Օմանի միջնորդությամբ մեկնարկած բանակցությունների առանցքում են եղել Իրանի միջուկային խնդիրը եւ Իրանի նկատմամբ պատժամիջոցների մեղմացումը:

ԱՎԵԼԱՑՈՒՄ

ՀՀ ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը երեկ ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Խալիլ Շիրոզլամիին: Նախարարը ողջունել է դեսպանին եւ շնորհավորել նրան առաքելության ստանձնման կապակցությամբ: ՏԿԵՆ-ից հայտնում են, որ Խուդաթյանը վստահություն է հայտնել, որ նրա գործունեությունը կնպաստի Հայաստան-Իրան բարեկամական հարաբերությունների հետագա ամրապնդմանն ու զարգացմանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են Հայաստան-Իրան համագործակցության լայն շրջանակին վերաբերող մի շարք հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել էներգետիկ, տրանսպորտի, ճանապարհաշինության ոլորտներին վերաբերող հարցերի: Նախարարը կարեւորել է Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման գծի շուտափույթ կառուցման, ինչպես նաեւ Հայաստանի եւ Իրանի միջեւ ավիացիոն համագործակցության խորացման, թռիչքների ավելացման անհրաժեշտությունը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում շարունակել օրակարգային մի շարք այլ հարցերի քննարկումները:

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

«ՌԵՆՇԻՆ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ Է ԹՈՂԱՐԿԵԼ

«Ռենշին» քաղաքաշինական-ներդրումային ընկերությունը հայտարարում է անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման մեկնարկի մասին: Պարտատոմսերի տեղաբաշխողն է Ամերիաբանկը:



«Ռենշին»-ն ավելի քան 24 տարվա պատմություն ունեցող քաղաքաշինական-ներդրումային ընկերություն է, որը գործունեության ընթացքում իրականացրել է շուրջ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում: Ընկերությունը միջազգային հեղինակավոր գործընկերների հետ համատեղ իրականացնում է մի շարք խոշոր նախագծեր, այդ թվում՝ Artlife Kempinski Residences, Skyline, WTCY:

Պարտատոմսերի թողարկման առթիվ Ռենշինի ֆինանսական տնօրեն Քրիստինե Չիչյանը նշում է. «Նման գործիքների կիրառումը նպաստում է կապիտալի շուկայի եւ իրական սեկտորի միջեւ ինստիտուցիոնալ կապի ամրապնդմանը, որտեղ ներդրումային ռեսուրսներն ուղղվում են իրական ակտիվների ստեղծմանը եւ երկարաժամկետ տնտեսական արժեքի ձեւավորմանը: Ռենշինի կողմից թողարկվող պարտատոմսերը ոչ միայն ներդրումային հնարավորություն են, այլեւ քաղաքաշինության ոլորտում ֆինանսավորման այլընտրանքային գործիքների կիրառության ընդլայնման կարեւոր խթան, որը կարող է նպաստել ներդրումային միջավայրի ակտիվացմանը»:

Թողարկված պարտատոմսերի ընդհանուր ծրագրային ծավալը կազմում է 10 միլիարդ ՀՀ դրամ, որի շրջանակներում թողարկվել է պարտատոմսերի 3 սերիա՝ ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով.

- Սերիա 1 - 2,300,000,000 ՀՀ դրամ, 12% արժեկտրոնային եկամտաբերություն, 3 տարի շրջանառության ժամկետ
- Սերիա 2 - 10,000,000 ԱՄՆ դոլար, 8% արժեկտրոնային եկամտաբերություն, 3 տարի շրջանառության ժամկետ
- Սերիա 3 - 10,000,000 ԱՄՆ դոլար, 8?5% արժեկտրոնային եկամտաբերություն, 5 տարի շրջանառության ժամկետ

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը դրամային պարտատոմսերի դեպքում կազմում է 1,000,000 ՀՀ դրամ, իսկ դոլարային պարտատոմսերի դեպքում՝ 10,000 ԱՄՆ դոլար: Ձեռքբերման նվազագույն քանակը դրամային պարտատոմսերի դեպքում 10 հատ է, դոլարային պարտատոմսերի դեպքում՝ 2 հատ: Բոլոր սերիաների դեպքում արժեկտրոնների վճարման պարբերականությունը 6 ամիս է:

Պարտատոմսերի տեղաբաշխման ժամանակահատվածն է 2026 թվականի փետրվարի 2-ից մինչ 2026 թվականի մայիսի 29-ը ներառյալ:

Պարտատոմսերը կարելի է ձեռք բերել առցանց՝ Ամերիաբանկի MyAmeria հավելվածի MyInvest ներդրումային հարթակի միջոցով, կամ այցելելով Ամերիաբանկի որեւէ մասնաճյուղ եւ լրացնելով հայտ-հանձնարարականը, կամ ուղարկելով լրացված հայտ-հանձնարարականի ձեւն Ամերիաբանկի էլ. հասցեին՝ capitalmarkets@ameriabank.am:

Տեղաբաշխումից հետո ընկերությունը դիմելու է Հայաստանի ֆոնդային բորսա պարտատոմսերը ցուցակելու նպատակով, ինչից հետո հնարավոր կլինի դրանք գնել կամ վաճառել երկրորդային շուկայում:

Պարտատոմսերի ձեռքբերման կարգին, ծրագրային ազդագրի, թողարկման վերջնական պայմանների էլեկտրոնային տարբերակին եւ պարտատոմսերի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարությանը կարելի է ծանոթանալ այստեղ: Թողարկողի եւ առաջարկվող պարտատոմսերի բոլոր մանրամասները, ինչպես նաեւ դրանց առնչվող ռիսկերը ներկայացված են ծրագրային ազդագրում:

«Ռենշին» ՍՊԸ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2026թ. հունվարի 21-ի թիվ 1/29 Ա որոշմամբ:

«Ռենշին»-ի մասին

«Ռենշին»-ը քաղաքաշինական-ներդրումային ընկերություն է, որի կողմից իրականացվում է շուրջ 1 միլիոն քմ բարձրակարգ կառուցապատում, իսկ ընդհանուր ներդրումների ծավալը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը:

2024թ. վերջի դրությամբ «Ռենշին» ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են 102.6 մլրդ ՀՀ դրամ, իսկ սեփական կապիտալը՝ շուրջ 20 մլրդ ՀՀ դրամ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶՍՊՄԱՆ ՓՈՒԼ

Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասն անհրաժեշտ է համարում Եվրոպայում միջուկային զսպման սեփական միջոցների ձեռքբերման շուրջ քննարկում սկսելը: Այդ մասին նա ասել է փետրվարի 6-ին ֆիննական Helsingin Sanomat թերթում հրապարակված հարցազրույցում:

«Միջուկային զսպումը կարող է ապագա քննարկումների մաս դառնալ՝ հաշվի առնելով ներկա իրավիճակը եւ այն փաստը, որ միջուկային զենքը միակն է, որն իրապես զսպման գործոն է», - ասել է Կալասը:

Եվրոպական դիվանագիտության ղեկավարի խոսքով՝ միջուկային զսպումը սովորաբար մտնում է ԵՄ երկրների իրավասության մեջ, «սակայն նաեւ ակներեւ է, որ իրավիճակն արմատապես փոխվել է»:

Հրատարակությունը գրում է, որ դրա հետ մեկտեղ Կալասը զգուշորեն է վերաբերվում միջուկային զենքի տարածման հարցին եւ դրան առնչվող ռիսկերին: Նա նշել է, որ եվրոպական երկրները միացել են այն պայմանագրերին, որոնք սահմանափակում են միջուկային զենքը:

Կալասը հայտարարել է, որ ռուս-ուկրաինական հակամարտության կարգավորման շուրջ բանակցություններում ԵՄ նոր ներկայացուցչի անհրաժեշտություն չի տեսնում, քանի որ դրա համար Եվրոպայում արդեն գոյություն ունեն համապատասխան հաստատություններ:

ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԸ ՀԵՐՔՈՒՄ Է

Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հերքում է շրջանառվող խոսակցությունները, թե բանակում հոգեւոր ծառայությունը դադարեցվում է:

ՀՀ պաշտպանության նախարարը լրագրողների հետ ճեպազրույցում անդրադարձել է ավելի վաղ հրապարակված իր հրամանին, որի համաձայն՝ փոխվում է բանակում հոգեւոր ծառայության բնույթը:

«Տեղի է ունեցել հետեւյալը. պաշտպանության նախարարի հրամանը փոփոխվել է, եւ փոխվել է ծառայության բնույթը: Այսինքն, այն շահարկումները, թե հոգեւոր ծառայությունը բանակում դադարեցվում է, ճիշտ չեն: Բանակում հոգեւոր ծառայությունը կարող է շարունակվել, պարզապես նրանք պետք է ենթարկվեն Զինված ուժերի բարոյահոգեբանական գծով վարչությանը»,- մանրամասնել է Պապիկյանը:

Հարցին, թե ինչո՞վ էր խանգարում բանակում հոգեւոր ծառայություն իրականացնողների ենթարկվելը Մայր Աթոռին, Սուրեն Պապիկյանը պատասխանեց.

«Մի բան կարող եմ ասել՝ Ձեր հարցին ի պատասխան՝ բանակում չի կարող լինել երկակի ենթակայություն»:

Պապիկյանը նաեւ հայտնել է, որ իր նոր հրամանով նաեւ հնարավորություն է ստեղծվում, որպեսզի Պաշտպանության նախարարությունը պայմանագիր կնքի Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր կրթություն ունեցող սպասավորների հետ, որպեսզի նրանք ծառայեն եւ կատարեն իրենց առաքելությունը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԲԱՑԱՌԻԿ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՎԻԿՏՈՐ ՎԱԶԱՐԵԼԻԻ 120-ԱՄՅԱԿԸ

Ապրիլի սկզբին Հունգարիան կնշի օպտիկական արվեստի առաջատար ներկայացուցիչ Վիկտոր Վազարելիի ծննդյան 120-ամյակը: Նրա հայրենի Պեչ քաղաքում հոբելյանական տարվա ընթացքում նախատեսվում է մի շարք միջոցառումների անցկացում:



Ինչպես տեղեկացնում է Euronews-ը, քաղաքի Վազարելիի թանգարանում կազմակերպվող ցուցահանդեսներից մեկում կներկայացվեն մշտական հավաքածուում չընդգրկված եւ նախկինում երբեւէ չցուցադրված աշխատանքներ:

2026 թվականին Պեչի քաղաքային թանգարանը կնշի նաեւ կրկնակի հոբելյան, քանի որ այն հիմնադրվել է ուղիղ 50 տարի առաջ:

Հունգարա-ֆրանսիացի նկարիչ Վիկտոր Վազարելին մահացել է Փարիզում 1997 թվականին: Առաջիկա ամիսներին կցուցադրվեն նաեւ նրա կնոջ՝ Քլեր Սպիների, ինչպես նաեւ որդու՝նույնքան հայտնի նկարիչ Ժան-Պիեռ Իվարալի աշխատանքները: Ծրագրում ներառված է նաեւ Վազարելիից ոգեշնչված ժամանակակից արվեստագետների ցուցահանդես:

Վիկտոր Վազարելիի թոռը՝ Պիեռ Վազարելին, նախատեսում է այցելել Պեչ հոբելյանական տարվա ընթացքում:

Հոբելյանական տարվա առաջին ցուցահանդեսը՝ «Պլաստիկ միավորներ եւ կոդավորվող հյուսվածքներ» խորագրով, Պեչի Ժամանակակից հունգարական պատկերասրահում կգործի մինչեւ մարտի 22-ը՝ Վիկտոր Վազարելիի ծննդյան օրը: Վերանորոգված, 50-ամյա Վազարելիի թանգարանը կվերաբացվի ապրիլի 9-ին:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՈՆՖԵՐԱՆՍ

Երեւանը մայիսի 25-29-ը հյուրընկալելու է Միջազգային աստղագիտական միության՝ «Աստղագիտության հաղորդակցությունը հանրության հետ» խորագրով կոնֆերանսը (CAP 2026), որն առաջին անգամ է անցկացվելու Հայաստանում: «Արմենպրես»-ի թղթակցի հաղորդմամբ՝ համաժողովին ակնկալվում է տարբեր երկրներ ներկայացնող շուրջ 200 պատվիրակների մասնակցություն:

«Մասնակցելու են աստղագետներ, ուսուցիչներ, աստղագիտության ոլորտում հաղորդակցության կազմակերպման մասնագետներ, լրագրողներ եւ այլ մասնագիտացում ունեցող մարդիկ: Ընդհանուր առմամբ, շուրջ 200 մասնակից ենք ունենալու: Սա հատուկ միջոցառում է, որն անցկացվում է երկու տարին մեկ: Նախատեսված է նաեւ առցանց մասնակցություն: Սա լինելու է աստղագիտության մասսայականացման մեթոդների քննարկման հարթակ: Նպատակն է՝ նպաստել աստղագետների, հասարակայնության հետ կապերի մասնագետների եւ լրագրողների միջեւ փորձի փոխանակմանը»,- տեղեկացրեց Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

Համաժողովի կազմակերպիչներն են Միջազգային աստղագիտական միությունը (ՄԱՄ) եւ ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը: Գիտական կազմակերպչական կոմիտեի (ԳԿԿ) անդամներն են Սամիր Դհուրդեն (Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջհամալսարանական կենտրոն, ԳԿԿ նախագահ), Ավիվա Յամանին (ԳԿԿ համանախագահ), Նաոմի Ասաբրե Ֆրիմպոնգը (ՄԱՄ աստղագիտության տարածման գրասենյակ, ԳԿԿ համանախագահ), Արեգ Միքայելյանը (Բյուրականի աստղադիտարանի տնօրեն) եւ տարբեր աշխարհամասերի երկրներ ներկայացնող այլ գիտնականներ:

Կազմակերպիչներն ու հովանավորներն են ՄԱՄ C2 հանձնաժողովը, ՄԱՄ աստղագիտության տարածման գրասենյակը, Բյուրականի աստղադիտարանը, ՄԱՄ աստղագիտության զարգացման Հարավարեւմտյան եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակը, Հայկական աստղագիտական ընկերությունը (ArAS) եւ Հայկական վիրտուալ աստղադիտարանը (ArVO):

Այս տարի նախատեսված են նաեւ միջազգային այլ համաժողովներ եւ միջոցառումներ: Մասնավորապես, սեպտեմբերի 14-18-ը տեղի է ունենալու Բյուրականի աստղադիտարանի հիմնադրման 80-ամյակին նվիրված գիտաժողով՝ «Մեր անկայուն Տիեզերք»-ը խորագրով: Նախատեսվում է նաեւ գործարկել Բյուրականի աստղադիտարանի աստղացուցարանը եւ ազդարարել Հայ աստղագիտության պատմության թանգարանի բացումը:

«ՊԵՊՈ 90»

Հայկական առաջին հնչյունային ֆիլմի՝ ռեժիսոր Համո Բեկնազարյանի «Պեպո»-ի ստեղծման 90-ամյակի առթիվ փետրվարի 5-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում բացվեց «Պեպո 90» խորագրով ժամանակավոր ցուցադրությանը:

Ցուցադրությունը եռակողմ արդյունավետ համագործակցության արդյունք է: Ներկայացված են Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի, Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի արխիվային նյութեր, որոնք վերաբերում են «Պեպո»-ին: Փաստագրական ցուցանմուշների կողքին հնարավոր է տեսնել «Տերյան» մշակութային կենտրոնի՝ «Պեպոն 21-րդ դարում» թեմայով ստեղծած յուրահատուկ հանդերձանքների հավաքածուն:

«1934 թ., երբ Արամ Խաչատրյանը դեռ ուսանող էր, Համո Բեկնազարյանից ստացավ կարեւոր ու պատասխանատու առաջարկ՝ ստեղծել առաջին հայկական հնչյունային լիամետրաժ ֆիլմի երաժշտությունը: Նա Մոսկվայից միանգամից մեկնում է Հայաստան եւ չի հասցնում անգամ իր ուսուցչին տեղեկացնել այդ մասին: Գնացքից նրան նամակ է գրում եւ ասում, որ որոշ ժամանակով բացակայելու է, սակայն խոստանում է վերադառնալ լավ երաժշտությամբ եւ մի շիշ հայկական կոնյակով»,-պատմեց Ա. Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն, Խաչատրյան տրիոյի դաշնակահար Արմինե Գրիգորյանը: Արամ Խաչատրյանն իր խոսքի տերն է եղել: «Պեպո»-ից հետո կոմպոզիտորը 20-ից ավելի ֆիլմերի երաժշտություն է գրել: 2013թ. Խաչատրյանի ձեռագիր նոտաները եւ կինոերաժշտությունն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Աշխարհի հիշողություն» ծրագրի միջազգային ռեգիստրում:

Ցուցադրությունում ներառվել են Արամ Խաչատրյանի՝ «Պեպո» ֆիլմի համար գրված երաժշտության ձեռագիր նոտաները, որոնք կոմպոզիտորի տուն-թանգարանին է նվիրել Խաչատրյանի որդին՝Կարեն Խաչատրյանը: ԳԱԹ-ի հավաքածուից ներկայացված են փաստաթղթեր, լուսանկարներ եւ այլ ցուցանմուշներ: Հոբելյանի առթիվ կոմպոզիտորի տուն-թանգարանը «Հայաստան» հրատարակչության հետ համատեղ լույս է ընծայել «Պեպոյի երգը» ժողովածուն, որը եւս ցուցադրված է:

Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը կարեւորեց համատեղ ցուցադրության կազմակերպումը, որը խոսում է միջթանգարանային առողջ փոխհարաբերությունների մասին: «Երկու կառույցներ, որոնց առաքելությունն է պահպանել, ներկայացնել ազգային մշակութային ժառանգությունը, իսկ «Պեպո»-ն միավորում է գրականությունը, թատրոնը, կինոն, երաժշտությունը: Մեր թանգարանի բազմաժանր ու հարուստ ֆոնդերը թույլ են տալիս համագործակցել շատ այլ կառույցների հետ եւ խոստանում ենք, որ նման նախաձեռնությունները շարունակական կլինեն»,-նշեց Խոջամիրյանն ու հավելեց, որ «Պեպո»-ի հեղինակ Գ. Սունդուկյանի արխիվային հարուստ հավաքածուն պահվում է ԳԱԹ-ում: Այն ներառում է ոչ միայն գրավոր ժառանգության նմուշներ, որոնց թվում է «Պեպո»-ի ձեռագիրը, այլեւ Սունդուկյանի անձնական իրերն ու այլ բացառիկ նմուշներ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնան» պատրաստ է նոր պայմանագիր կնքել թիմի լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկու հետ, հաղորդում է ESPN-ը:

«Բարսելոնայի» ղեկավարությունն ու գերմանացի գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը գոհ են 37-ամյա ֆուտբոլիստի խաղից եւ դերակատարությունից հանդերձարանում:

Լեւանդովսկու գործող պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Նոր պայմանագրով նրա աշխատավարձը կկրճատվի: Կողմերը դեռ չեն բանակցել:

Ընթացիկ մրցաշրջանում Լեւանդովսկին մասնակցել է 17 հանդիպման, խփել է 9 գոլ:

ՉԵՆ ՕԳՆՈՒՄ

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանի նշանակումից հետո ազգային թիմից հեռացավ նաեւ Ռոման Բերեզովսկին, որը դարպասապահների մարզիչն էր:

«Երբ Եղիշե Մելիքյանին նշանակեցին հավաքականի գլխավոր մարզիչ, նա ինձ զանգեց եւ ասաց, որ ունի իր մարզչական շտաբը, այն իրեն բավարարում է: Նշեց, որ այդ կազմի հետ վաղուց է աշխատում՝ «Փյունիկից» սկսած, եւ ցանկանում է իր պատրաստի մարզչական թիմով շարժվել առաջ:

Չեմ կարող ասել՝ ինչպես կընդունեի, եթե հիմա Եղիշե Մելիքյանից հավաքականի մարզչական շտաբ վերադառնալու առաջարկ ստանայի: Իրենք ունեն դարպասապահների մարզիչ, եւ տեղին չի լինի խոսել այդ մասին: Իրենք աշխատում են:

Այս պահին դժվար է Հայաստանի հավաքականի հետագա արդյունքների մասին ինչ որ բան ասել: Բարդ ընտրական մրցաշրջան անցանք, որը լի էր խոշոր հաշիվներով պարտություններով: Այս շրջանը թեւերս չարժի մտցնել հավաքականի ակտիվի մեջ: Միակ հաղթանակն այս փուլում ունեցանք Իռլանդիայի հավաքականի նկատմամբ: Հայաստանի հավաքականը բարդ շրջան է անցնում, բայց լավատեսորեն ենք տրամադրված ապագայի նկատմամբ, դրական արդյունքների հույս ունենք: Կարծում եմ՝ պետք է համբերատար աշխատենք, հավաքականը համալրենք դրսի լավ խաղացողներով: Շատ լավ կլիներ, որ տեղացի ֆուտբոլիստներով համալրեինք թիմը, բայց Հայաստանի առաջնությունից դժվար կլինի ընտրություն կատարել: Պետք է Ռուսաստանի առաջնությունում կամ դրսում հանդես եկող ֆուտբոլիստների ներգրավել ազգային թիմ:

Մեր հավաքականում այժմ պակասում է միասնությունը: Մենք ունենք շատ լավ ֆուտբոլիստներ, որոնք տարբեր անձնական հարցերով չեն մասնակցում եւ չեն օգնում հավաքականին: Եթե մեր ղեկավարները կարողանան այս հարցը լուծել, գուցե արդյունքները լավանան: Հենրիխ Մխիթարյան, Խորեն Բայրամյան, Սարգիս Ադամյան, Ռուսաստանում խաղացող հայ ֆուտբոլիստներ: Մեր տղաների ուժը պակասում է պայքարի, լավ արդյունք ցույց տալու համար: Այս պահին իրավիճակը սա է. թող չնեղանան այդ մարդիկ»,- ասաց Ռոման Բերեզովսկին:

● *Փետրվարի 7-ին՝ ժամը 19:30-ին, Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Անահիտ» ներկայացման պրեմիերան:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն աղաստան հայցողները:

Վահագն Գրիգորյան, 34 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Նրանք ունեն տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի իրավատերը:

Մնի Գալստյան, 26 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված): Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք, հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները, դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով տրամադրվող իրավունքներից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն՝ Ewronews-ից

Պլեսեցկի պետական փորձարկային տիեզերակայանից հաջողությամբ մեկնարկեց «Սոյուզ-2.1բ» միջին բեռնատարողության կրող հրթիռը: Մեկնարկն իրականացրել է Ռուսաստանի օդատիեզերական ուժերի մարտական անձնակազմը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 8 - 1 + 3
Կոտայքի լեռներ	- 4 - 7 - 1 + 2
Կոտայքի նախալեռներ	0 - 2 + 4 + 6
Գեղարքունիք	- 2 - 6 0 + 4
Լոռի	- 3 + 2 + 8 + 11
Տավուշ	- 2 + 1 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 5 - 8 - 2 + 1
Արագածոտնի նախալեռներ	- 2 + 2 + 3 + 7

Արարատ	- 1 + 2 + 5 + 8
Արմավիր	- 1 + 2 + 6 + 8
Վայոց ձորի լեռներ	- 4 - 7 0 + 3
Վայոց ձորի նախալեռներ	- 1 + 2 + 7 + 10
Սյունիքի լեռներ	- 4 - 8 - 1 + 3
Սյունիքի նախալեռներ	- 3 + 2 + 8 + 12
Սյունիքի հովիտներ	+ 3 + 6 +13 + 16
Երեւան	0 + 2 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **06.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*